

ունի այս և այ պահանջ կարէ ունի
ուն վեճը սպազմ նախք ունի
մեջքով մէ սկսում
ունի ուն մասնակի

ՆԵՐԱԿՆԵՐ ԶԱՄԳԵԶՈՒԹԻ ԳԱԼԱՐԻՒԹԻ¹

ՆԻԿ. ԱՂԲԱԼԵԱՆԻ

I

Մի երկու խօսք: Այս նամակների նիւթը այն գեղեկութիւններն են, որ արձանագրել եմ յուշապետրիս մէջ 1896 թ. գարնանը: Ես շրջել եմ առաւելապէս գիւղական ժողովրդի դրութեան հետ ծանօթանալու համար, որպէս սոսկական հերաքրքրող: Պարզ է, որ դիտել և արձանագրել եմ չըմուռանալու համար միայն այն, ինչ հերաքրքրական է թւացել ինձ: Հաւաքած գեղեկութիւններս վերաբերում են գիւղական կեանքի մի քանի կողմերին և նոյն իսկ դրանց վերաբերմամբ պակասաւոր են: Այդ այն հանգամանքի հետևանքն է, որ գիւղերն անցնելիս ես չունեի որ և է սիստեմական ծրագիր և շար հարցեր ինձ հերաքրքրել են արդէն մասսամբ գիւղի կեանքը ճանաչելուց յետոց: Ընթերցողը կը նկատի թէ ինչպէս տեղեկութիւններս գնալով բազմակողմանի և մանրամասն են դառնում: Այս էլ պիտի ասեմ, որ հարցուփորձի ժամանակ ինչ հարցրել եմ մի գիւղում, մոռացել եմ հարցնել մի ուրիշ գիւղում, ինչի վրայ ուշադրութիւն եմ դարձրել մի գեղ, մրահան եմ արել մի ուրիշ գեղ: Եթէ այն ժամանակ մրածէի թէ մի օր կարող եմ

¹ Շնորհակալութիւնս եմ յալրնում Մելլեցի պ. Մատթէոս Շահնաւսին, որ իր բազմաթիւ ծանօթութիւններով Զանգեզուրի գաւառի մասինք չափազանց օգնել է ինձ:

ՀՅՈՒ շարերս տպագրութեան տալ, ի՞հարիէ շար քան այնպէս չէ
Անիս, ինչպէս որ է այժմ:

Ասելու այն է, որ թող ոչ ոք չըկարծի թէ առաջնութիւն
ունիմ մի զաւառի ուսումնասիրութիւն, տալուն հոկտե յու շաբաթը
որը ան կարու է մէկին օգործակար լիֆել, որ ցանկանում է Զաքերիզու ըլք
մասին մի դաշտակար կաղմել, այդ իմ վկացելու բանը չէ. բայց որ
կա և ի կասիածում նրա դալիք օգործի մասին, դրա ապացութէ
ՀՅՈՒ շարերս տպագրութեան յանձնելու իրողութիւնն է:

1. ՇԱԱՆԻՅՈՐ: Գիւղի պաշտօնական անունը Ապազար (Աս-
տազոր) է և մօպակաց թբքաբնակ. Թղթաթի հետ կազմում է
մի վարչական համայնք: Նա ընկնում է Ալանդեազի յևսնաշղթեազի
Դէպի Արաքսն իջնող լողերից երկուսի արանքում, համարեա Արաքսի
ափին: Գիւղը Սեղբուց Դէպի հիւսիսարևելք է. այդ երկու գիւղերը
կցող ճանապարհը, որ զնում է Արաքսի ուղղութեամբ, թէև քար-
քարուք է և կառք չի բան անում, բայց փառք է զաւառի շաբ-
ճանապարհների հետ համեմարած, որոնք դեսնելու բաներ են. գնում
են, ծուում, գլխի վիրում, բարձրանում, սոլում, մաղլցում և
ժայռերը, մինում անփառը և ամուր ցեխ դառնում, ցեխ, որ ձիր-
պայտն է պոկում ամբակից՝ այնքան թանձը է ու կպող. դուրս են
գալիս՝ լնկնուց արգսերը, զանազան ուղղութիւններով՝ իրանց քմա-
քին նայած՝ վազում կանաչուպներով, մանում զիւղերը, դուրս
գալիս. և այդպէս շարունակ...

Պետական հաշտով Նւանիձորն ունի 99 ծուխ, բայց իսկամբա-
152 գուն է: Առհասարակ գիւղերն երկու հաշիւ ունին ամեն գեղ-
ծիսի հաշիւ և ամափալ ուրառը զների հաշիւ. շաբ է պատահում
որ մի ծովի բաժանում դասնում է երկը տուն, բայց էլի մի ծուխ
է հաշտում ու մի ծխի հարկ պալիս, ինչպէս նաև մի ծխի հող
ունի միոյն: Ինակիչների թիւն է 793, որոնցից 423 աղամարդ
և 372-ը կին: Գիւղը ձորի մէջ է, ուր վազում է մի գեղակ և
թափում է Արաքսը. բացի գեղակը, գիւղն ունի 3 աղբիւր. այս
ջրով է բաւականանում Նւանիձորցին: Աղբիւրները վաս չեն. Են
մարտայ լնթացքում ամառը երկու անգամ կորեկ են իսպաս:

Գիւղայիները պետական հողի վրայ են: Հողը բաժանւած է ոչ համայնական, այլ այսպէս կոչւող համարեցարեցի սկզբունքով: Սյս գեսակ հոգաբաժանութեան հական ջափկութիւնն այն է, որ հողի բաժնելը պարբերաբար չի կրիւում, ինչպէս համայնականը: Վաղ ժամանակներից ամեն ծուխ յայրնի քանակութեամբ հող ունի, որ իր սեփականութիւնն է հաշում և բաժանում է իրանից դուրս և կող նոր լնականիքներին: Ով ուղում է նոր կրորձեռք բերել գիւղի լնդհանուր: Հողաբաժնից վարելու համար, հասարակութեան մերավարի հումար վճարում է 20—50 ս. նայած գեղի պարագերութեան: այդ վճարը աւելանում է գիւղի ծախսերն անելու գումարին: Վարելահողերը այդինքի հողի հետ համեմափած չափ անսպառութեան: և զարմանալի էլ չ: վարելահողը ծը ջրում էր ոչ պարագացում:

Հողը քիչ է և չի բաւականացնում գիւղացիներին: պատճառութերից մէկը, որ այդ քչութիւնը զգալի է դարձնում մասնաւոր լնականիքների համար, այն է, որ ինչպէս ծուխերը այնպէս էլ ընդունիքները շուրջ են բաժանում: (նահավերական լնականիք չկայ): Մի կողմից նոր պահանջներ են առաջ զալիս, միւս կողմից հողաբաժներն աւելի և աւելի փոքրանում են և դրա հետեւանքն այն է լինում, որ զիւղացիք արխավում են հողերը ծախելու կամ ամերոշնովին կամ մի երկու կորորը, որից առաջանում են հողասակառաց անհող լնարանիքներ՝ ապագայ բանւոր դասակարգի կորիզը: Հողը ծախելու առիթները երկուսն են: աղքաղանալը և ացրիա-

Համառօտ առղեկութիւն Զանգեզորի ազգաբնակութեան մասին: Զանգեզուլի գաւառը Գանձակի հահանգի մի մասն է: Նրա ազգաբնակութեան լնդհանուր թիւը 1886 թ. մարդահամարով 19,446 ծուխ է, կամ 123.997 մարդ: որոնցից ու ամառից 68.560 հողի, ինչ կի՞ն 55.437: Սրանցից Հալերը 6.946 ծուխ էն, կամ 57.425 մարդ: որոնցից 31.489-ը ու ամառից, ինչ 25.936 կի՞ն: Համեմատական չափով Հալերը ազգաբնակութեան ամենամեծ մասն են կաղմաւմ, և թէս ծխահաշւով թուրքերից, որ աղքաբնակութեան միւս խոշորագուն մասն է՝ քիչ են, բայց թւով մօտ 20.000-ով չափ են, թուրքերը (մնա մասով Ելա աղանդից, կան նաև Սիւնիներ) 7.047 ծուխ են, բայց 37.653 հողի: Միւս ազգերից թւով աչքի են լնկում Քրդերը: 5.081 ծուխ, 26.824 հողի:

նալը։ Աշբակութեան գլխաւոր պատճառներն էլ չբերքն է և վաշ-
խառութիւնը։ Նւանիձորցին քանդւոմ և թէ արգերի և թէ այ-
դիների չբերքից, վերջինների թշնամին «Ծոզն» է, որի դէմ, մեր-
բեցիներից սովորելով, վերջերս սկսել են կռւել ծծումք փշեռվ։

Նւանիձորցոց առաջնակարգ պարապմունքը այդեղործութիւնն
է և ապա՝ հողագործութիւնը, բայց այս վերջինը մինչեւ անգամ
ապրուստի ալլիւր չի ճանաչում։ Խսկապէս հոլլ վարում են գըլ-
խաւորապէս յարդի համար, որ ձմեռը գան անառուններին։ Եւ քանի
որ անսնունը, մանուանդ զբասորը ամեն մի Նւանիձորցու անհրա-
ժեշտ է, ուստի համարեա ամենքը ցորեն ու գարի են ցանում։
Պարզ է, որ այս պայմաններում զիւղացին միշտ էլ հացի կարիք
ունի, որ և լրացնում է շրջակաց զիւղացիններից՝ զինին ցորենի
կամ ալիւրի հետ փոխելով։ Նւանիձորցոց վարելահողերը համարեա
առանց բացառութեան զիւղից բարձ՛ լեռներումն են, ուր և չուում
են ամառւաց սկզբին թէ հունձ անելու և թէ ամառանոց («եալլա»)։
Հողի մշակութիւնը նահապէսական է։ վարում են երկլուծ արօ-
րով, որ այս կողմերը կոչում է «վէսպի»։ Եւ բոպական ոչ մի զօր-
ծիք չկայ։ Նոյն իսկ զութան։ ասենք՝ անյարմար էլ է, ինչպէս մեր
լեռնոր գաւառներից շապերում՝ այս կողմերն էլ վարելահողը պը-
ռէծով (մանրաքարով) լիքն է։ ասում են որ եւրոպական գու-
թանը շուրջ է կողմրում։ Այս դէպքում ուրեմն մեղաւորը զիւղա-
ցու այնքան բամբառող անշարժութիւնը չէ միայն։ Որովհետեւ ամեն
պուն երկու լուծ եզր չունի և ձեռնպու էլ չեւ ունենալը, ուստի
հողը վարելիս հարակքաշ («վարակից») են դառնում, ընկերա-
նում են և փոխադարձ օգնութեամբ իրար հող վարում։

Օժանդակ և գարածւած զբաղմունք է այսրեղ շիրամապա-
հութիւնը։ սրանով առանց բացառութեան ամենքն են պարապում։
Վարեկան 12 ֆ. աւել սերմ է զործադրում, որ մի զդալի քանա-
կութիւն է 152 գուն ունեցող զիւղի համար։ Ըսդհանրապէս շերա-
մապահութեան արդիւնքը միջակ է լինում։ Համարեա ամենքն այս
պայմաններով են աշխատում։ որքան պահելու կարողութիւն ունին
այնքան սերմ են վերջնում սերմադիրոջից (մեծ մասամբ կար-
բարակեանից, որ թել մանելու զործարան ունի 0ը բուրամթ քաղա-
քում։ Նախանի գաւառ), սերմին փող չեն վճարում, իսկ սրա-

ցած բոժոժը ծախումնեն սերմ պառզին միայն վառթը ջառութլով
Այս գործը բացառապէս կանանց ձեռքին է:

Միւս օժանդակ պարագմունթը անասնաբահութիւնն է, ամեն
գուն, ամենաշտղն ու ամենաքիչը վերցրած՝ ունի 2—20 հափ
այծ, միայն գրաւը գուն ունի 30—200 հափ ոչխար, սակայ բա-
ցառութեամբ ամենքն ունին 2—5 կով մի քանիքը միայն 1 հափ,
ուստի առն բացառութեամբ՝ ամեն գուն ունի 1—4 եզ: Խափ ջո-
րին, ոչ անհրաժեշտ և ամենայարմար դրասդն է այս քարքարու-
կողմերում՝ ամեն գուն ունի 1—2 հափ: Տաւարն ու ոչխարը
ամառը սար են գանում գիւղապարկան տեղեր (հողաբաժնի մէջ է)
գիւղից 10 վերաբ հեռու, որի համար ոչինչ չեն վճարում: Սարի-
արդիւնքներն այնքան քիչ են, որ իրանց էլ բաւականչէ: Խոչ խօսք
որ ոչինչ չեն ծախում, այլ իւղ է թէ պանիք իրանց համար են
շինում:

Եթէ յիշենք արհեստներն ու պանդխութիւնը՝ օժանդակ
պարագմունքները վերջացրած կը լինենք: Խնչակս առհասարակ ամեն
գիւղում, այնպէս էլ այսուղ ասանձին մարդ կայ միայն այն ար-
հեսպների համար, որի իմանալն անհրաժեշտութիւն չէ և յարմար
չէ ամեն գիւղացու: Տրեխ անել, գործիքների փացփի մասերը շինել
ամենքն են կարող, բայց պար քաշել, զան դուռն ու լուսամուգը
շինել ամենքը չեն կարող. Դրա համար էլ գիւղում կայ մի որմնա-
դիր և մի հիւսն: Գարբինը գնում գալիս է, առ մի քթափառական
արհեսպառը է, որ գիւղէ գիւղ ման է գալիս և ժամանակաւորա-
պէս պարապում իր արհեսպառի: Այս տիպարի արհեսպառներ շապ-
կան Զանգեղուրի գաւառում և իւրաքանչիւրն իր գիւղերի շրջանը՝
ուղղոնն ունիր Գիւղն ունի նաև մի երկրորդ կարգի վահառական,
որ տեղացի է, և մի մասգործ:

Պանդխութիւնը նոր է սկսել գլխաւոր պար-
ճառը հողի քըութիւնն է, գործի պակասը, որ նայն է թէ աշխա-
տողների աւելորդութիւննը: Նրանք պանդխութիւնն շապ հեռու-
ները և բացառապէս երիփասարդներ են: լինում, գնում են Բագու,
Բաթումի Թիֆլիս, Օտարութեան մէջ նրանք հասարակ մշակներ
չեն (չերնօրաբօչի), այլ խոհարարներ: Վաճ ու կրկաթուղու ծա-
ռաներ և այլն:

Նեանիձորեցիք հէնց թէկուզ նրա համար, որ դլիսաւոր ուշա-
թրութիւնը այդիների վրայ է, զարդացրել են պարապմունքի այդ-
միջը և լաւ այդիդործներ են համարեւմ Նրանց դինին լաւ հըռ-
շակ ունի և արտահանուում է 100 աւոր վերսուն հեռու մինչեւ նուշի.
բաց նրանց գլխաւոր հրապարակը Ազուլին է, 0 րդութաթը և գա-
տափի պղնձահանքերը¹. Ամեն դուն. 500—6.000 հազորի որթ՝
վազն ունի. ամեն վազի տարածութիւնը հաշւում են 30 քառակի.
Վերշուկ, ուրեմն ամեն դուն ունի 195—2340 քառ. սահէն այդին
Ազգիներէ բացառապէս վազնափունկ չեն, կան նաև սրբակու ծա-
ռեր. պառուղներից նշանաւոր են՝ թութը, ծիրանը, կեռանը ու
թեղնը, բաց մանաւանդ նուռն ու թուզը գոված փեսակից, պառուղ
չեն ծախում, կարելի է ասել. իրանց համար են չորացնում կամ
պահում, Գիւղացու աշքապութիւնը հաւասարաչափ ծանրանում է
նաև այդիների վրայ. սրանք էլ են ծախսում Ազգիների գինն
աւելի բարձր է քան վարելահողերինն, ի հարկէ. ծախսում են վա-
զահաշւով. մի վազնափելը, որ այսպել կրչում է «մէջ կամ «կըսիլէ»
նաշած փեղին արժէ 20—70 կոսդ, այդիները որքան Դէպի Արաքսն
են իջնում, այնքան թանկ են գնահապում:

Կանանց վրայ է ընկած ի հարկէ բոլոր դան ու սարի գործը.
Վերակուր եփել, հաց թիսել, լւացք անել, կարել-կարկարել, իւղ
ու պանիր շինել, մի խօսքով ամեն բան, ինչ անում է ամեն փեղ
գիւղացու կինը. սրա վրայ աւելացրեք, որ նա գործում է պատա-
կան, գոված փեսակի շալ, կարպեփ ու վերմակիերես, կրաւ. եռան-
դով մասնակցում է այգեկութին և ուրիշ աշխարանքների, չորսով
աշը է կրում այդիները պարարփացնելու համար. ինչպէս դեսանք
շերամապահութիւնն էլ նրա գործն է: Ինչպէս ամեն դեղ, այսպել
էլ կինը մարդու աջ թևն է, նոյն իսկ 8 տարեկան փէքը աղջիկը
այսինչ շատ է պէտք զալիս: Աշխարասէր լինելուց զար բարոյապէս
էլ շաբ մաքուր են, կրօնաս էր ուժամասէր. գինի խմելու սովորութիւն
չունին և չափից դուրս համեսփ են: Իրանց Դէքն ընդանիքում

¹ Զանգեզուկում կամ մշակուլ պղնձահանքեր, որոնց մասին խօսք
գը լինի նամակներից մշկում.

շար նախանձելի է՝ ուրիշ գիւղերի կանանց հետ համեմատած, որոնք թէև նոյնքան դործ են անում, բայց շար սպոր վիճակ ունին: Եւանիձորցու կինը բանամեն ինչին բեղեակ է, ոչ միայն ներսի, բայց դործերին, այլ և դրան մարդու դործերին: Մարդիկ լաւ են վարդործերին, այլ և դրան մարդու դործերին: Մարդիկ լաւ են վարդործերին, այլ և դրան մարդու դործերին: Մարդիկ լաւ են վարդործերին, այլ և դրան մարդու դործերին: Մարդիկ լաւ են վարդործերին, այլ և դրան մարդու դործերին:

Սարհանած է կինը: Մեզ թւում է, որ այս բանին շար է օգնում լնապանիքների բաժանւելը. նոր բաժանւած և քչանդամ լնարանիքը ապրելու համար պէսք է լարի բոլոր ուժերը և իր բոլոր անդամներով մրցման մէջ մզնի. պարզ է, որ ամեն մէկին բաժին է լնկնում աւելի շար աշխատանք և կինը ամենից առաջ դառնում է մի անփոխարինելի և չափազանց գնահատելի անդամ նոր լնարանիքում: Մեծ լնարանիքներում հարաների դերը սքողւած է և պարզ չի գիրակցւում, որովհեգու նոյն զործն անող շար մարդ կայ բանը:

Աղջիկները մարդու են զնում սովորաբար 10—12 տարիկան. 18 տարեկան աղջիկը պառաւ է համարուում. դղաներն ել 18—25 տարեկան են պսակուում. 13—18 տարեկանն ել պապահում է. բայց սակաւ: Եւար են սիրում չհաս պսակներ. մի բանից մի բարեկամ գուն աղջիկ բանելը սովորական է: Ուզած աղջկան ևթէ չեն բարեկամ փախցնում են:

Այս գիւղը միւս գիւղերի հետ համեմատած լաւ-վար ապահով կարելի է համարել. այդ երեսում է նաև ապրուստից. սովորական սնունդը պասին սոխ ու հացն է, շոռ (թթու) դրած բոխը, կաղամբը. իսկ ուտպանն թանեսպասը, պանիրն ու մածոնը. մսի կողմից, մանաւանդ բաւարի մսի, որ աւելի արժան է՝ գիւղը զուրկ չի և յաճախ է ուտպում՝ աշխնքն ամեն կիւրակի և տօն օր. Փունդը ծախտում է 4 կոպէկ: Գուցէ շատերին այս կիւրակրացանկը այնքան ձոխ չերեաց, բայց ով տեսել է սոխ ու հացով և քաշած պանրով միայն ապրու գիւղեր, կ'ասի որ այսպէս ապրելը փառք է:

Ըստհանուր առմամբ Եւանիձորցիք քաջ են և սրբուո. քիչ մարդ կը լինի, որ հրացան բանացնել չիմանայ և որս անելիս չլինի:

գաւ աշխարողներ են և լաւ կոնծոլներ, բայց հարբեցո՞վ՝ ռուսի մդքով՝ ինչպէս մեր ոչ մի գիւղում, այնպէս էլ այս կողմերը չկայ: Գիւղացիների ընդհանուր գիրակցութիւնը ցած է. օրէնքից ինչպէս ամեն տեղ այս կողմերում էլ, ոչինչ չեն հասկանում: Լաւ իմանալով թէ ինչ է նշանակում դափարանի ձեռն ընկնելը, սովոր են վէճերն իրանց մէջ խաղաղ վերջացնել, մանաւանդ որ չեն ուզում իրանց արող մարդիկ իմանան, գիւղից դուրս գայ: Անշարժ չեն. նորամուծութիւնների ընդունակ են:

Ազրում են մինչև 60 տարեկան հասակն ամենաշատը. 60 տարեկան դառած՝ ոչ ոք այլ ևս գիւղից չի դուրս դալիս, կարծես իր տանն ու դռանը մեռնելու համար: Որպէս դաշտի ժողովուրդ միջահասակ են, նոյն խոհ աւելի ցած. Դիմագծերը խոշոր, մազերը շագանակագոյն, աչքերը սև ու շագանակագոյն, ոչխարաչք, քթերը ալաւաղւած:

Գիւղն ունէր միդասեան երկսեռ ուսումնարան և պահում էր երկու ուսուցիչ. մէկը 650, միւրը 325 ռ. ռոճկով: Ուսումնարանում կային 70 աշակերտ, որոնց 65 տղայ, 5-ը աղջիկ: Աշակերտներից 15-ը օֆար գիւղերից էին. Դրանցից 5-ը երնը վերսոր հեռու գտնւող Մալե (Малвала) գիւղից՝ որ գնում-զալիս էին ամեն օր: Շւանիձորցիք թէ ուսումնարանին և թէ ուսուցիչներին լաւ են նայում, որովհերեւ պարզ գիրակցում են ուսման կարեորութիւնը. աշակերտից պահանջում են, որ Դպրոցն աւարտելուց չեփոյ իմանաց նամակ, մուրհակ ու րապորտ գրել, հաշիւ պահել և հէնց այդ յուսով էլ ուսման են դալիս որդիկերանց: Աղջիկ ու վղաց հաւասարապէս ընդունակ են բոլոր առարկաներում և նոյնքան անընդունակ երգելում: Գիւղացիք երգում են թուրքերէն. ինչպէս նաև առածներն են թուրքերէն:

Ունին մի անգմբէթ նորաշէն ելեղեցի, որ շինւել է 1878 թ. համայնքի միջոցներով: Մի քահանայ ունին, որ ժամանակաւորապէս հովում է սրանց. Շիկահող գիւղի քահանան է: Այժմ ուզում են իրանց սեփականն ունենալ. թեկնածուն Շուշևայ թեմական դպրոցի 4-րդ դասարանից դուրս եկած մէկն է, որ խանութպանէ

և խթելով հետաքրքրում է զիրք ու լրադրով. ուսուցիչն է գաղաքականի կողի զիրքի անունով գալիս է մի և շահու, որ բժ. Գասպարեանի անէրն է. բացի ուսուցիչներից և խանութանից ուրիշ ոք չեղարդում. նոյն իսկ չեն ել ուզում լսել ուրիշի ընթերցումը. չեն հետաքրքրում պարզապես

Եկեղեցին դրամ ունի, որ պրում էր զիւղացիներին 20⁰/0-ով՝ այժմ 12⁰/0-ով են դալիս Բայց եկեղեցու միջոցներն այնքան քիչ են, որ վաշխառուներ կան 10 հոգի, որոնք թէ շրջակայ զիւղացիներին և թէ Շահնիձորցոց 20⁰/0-ով փող են դալիս:

Հասարակական հիմնարկութիւններից չմոռանանք չիշել նաև գիւղական կշիռ:

2 ԿԱՅԻՆԱՆԳ. Գիւղը Շահնիձորից դէպի Վաթարի պղնձահանքերը դանապարհի մօսերքն է գտնուում, մօս 20 վերստ դէպի արեւելքը ծանապարհն անխնամ է, դժւարանց, նեղ ու ոլորապորյա, լերի ու ապառաժով կամ անփառութեղերով ցցւում կամ իշնում է, մինչև հասնում է Շահնիձորից դէպի արեւելք բնկնող լեռնազօտու գլուխը, որ մի բնական սահման է Գիւղելահանքի և Վափանի միջնի: Գիւղը շրջապարած է անփառով, որ օղակում է անմիջապէս վարելահողերը, որոնք նոր են բացւած: Նոր զիւղ է և չի ցիշափակած հին 1886 թ. մարդաբարում. հիմնուիրը Վարադաղի գաղթական մի քանի մարդաբարի բներն են, որոնք անցել են Զանզեզուր՝ կորելով երկու դաշտաների՝ նաև երիտ պիտութիւնների բնական ու միանգամայն նաև քաղաքական սահմանը—Արաքսը: Գիւղը 12 տուն ունի, որոնցից 5-ը՝ Վարադաղից եկածներն են, իսկ եօթը եկել են Կղանանց, Կատալի և Վանիք զիւղերից: Մրանցից երկու վերջինը Գիւնէյուն են՝ լեռ և լանջ զիւղերից: Մրանցից երկու վերջինը Վիւնէյուն են՝ Սելլու լեռների. Դէպի Վրաքան իշնող վեշերի վրայ, իսկ միւսը Վանան է, նոյն լեռների արեւելահիւսիսցին կողմում: Բոլորն էլ գաղթել են հողի պահանից սպիտուած:

Կեմանցի հողն անփառի հետ առած դեռ վէճի պակ է. վիճու կողմերն են. մի կողմից պետութիւնը, միւս կողմից Նընջեանի թռւրքը բէպերը (Զանկեղ. գտասա) և Շիկահողի Վէլիք հաւքարովերը:

Որովհետեւ զիւղի Դիրքը բարձր է, գոնւում է սարահարթի գլաւ, և բաւականազ արօգներ ունի, ուստի ամառը թէ հոյ է և թէ սար գնալու կարեք չի այս շծում: Վակ ամառը լեռներով

պաշտպանակած լինելու շնորհիւ բարեխառն է, քիւղացիների թվութաւոր պարագմոնքը երկրագործութիւնն ու անտանագործութիւնն է, Յանուար են գորեն, գագիւ և աճար, իսկ անհասուներից պահույթ են այծ ու փոփոշացն այնքան դոլիս է, որ մի մասը կարելի է ծախել, ծախելու պահում են Ակղբի կամ Կամարի հանքերը, երկիրը հին ձևով են մշտիում. Դին գործիքներով, վարում են արօրով և 4 շուծն մն լծում, Վարելահողիրը չեն ջրում, զիւղի մօսից հոսող գեղակի ու լղութեամբ հողեր են ընկած, որոնք կարող են ջրը և պէտքական լինել ծառասպանիւն կարգութէրի համար, արդէն ակնել են օգուեկը այդ հողերից:

Հացի աւելցուկը զիւ բացիներին յարաբերութեան մէջ է դնում շրջակացքի հետ. Կամարի հանքերի հետ նրանք կապւած են նաև բանուրներ տալով, որովհետեւ շատերն ափիաւած են զիւղական պարագմունքներից դուրս էլ աշխատանք որոնելու։ Աահայն արանց թիւը շատ քիչ է, Աւրիշ կողմանկի պարապմունք չունին. որոր դութիւն անում են, բայց իրանց համար, ինչպէս նաև ձուկն են բռնում. գերը շատ համեղ ձուկն ունի Ֆէկը պորձել է նաև խոր պահել, որ և յաջորդել է: Արհեագաւորներ չկան, դարբինը, որ ամենահարկաւոր մարդն է ամենամի զիւղում, այսպէլ զալիս աշխատաւ և զիւում է:

Դիւ շացիք դուցէ բու աւզրէին ևթէ հողի վէճը միջնեղ չլինէր. այդ վէճից վնասուղը պիւդացին է դլլուսարագիս. վէճ չքաւոր լինելու պայմանեներից կիւղի նոր շինելը ինքն ըստինքեան մի խոչը սրադնառ է, բայց թուրք բէղիքի հարաբենաբրութիւնը դալիս կրկնապափում է զիւղուու հիմնակի վարութիւնը։ Տղիգութեան վրայ աւելորդ է շեշտիլը, որովհետեւ նա մի լնդհանուր պարագանէ ամբողջ գաւառի ցերտմանցովթեամն, և այսիմն ոտեսն զիւղում էլ դեր է խաղում. թէկ հոգի մեղքամկանաթիւն վէճը դեռ վերջացած չէ, բայց ինքիրն ու ժողովակելով տիրող են հանգիստնում և 10 ժից մէկն առնելու գեղ՝ 5-ից մելի և առնուած բիու պիստի ագիւի հողերն այսպէս առած նոր են կազմում պէտքը և անդառը կապիել, արմասները գուրս ածել, որ նոր կարողանան փարել, ուզուին մի ինքան կարաղանում. Եւրեկից վերցնել ու զարդարութ դարձնել, ոյն էլ վերան է, պարզ է, որ այսպէլ հողը

պահնի որ զիւաի հողերն այսպէս առած նոր են կազմում պէտքը և անդառը կապիել, արմասները գուրս ածել, որ նոր կարողանան փարել, ուզուին մի ինքան կարաղանում. Եւրեկից վերցնել ու զարդարութ դարձնել, ոյն էլ վերան է, պարզ է, որ այսպէլ հողը

քաժանելու մասին խօսք չի կարող լինել: Յիշենք այսպես, որ հողը պարապելուց յեղոյ առաջին դէզին ոչինչ չն վճարում: ոչինչ չեն վճարում առհասարակ նաև անքառից և արօդներից օդուելու համար: Հողը սետհող է, հարուստ, նոր մշակող և պրլարեր:

Սակայն չնայած իրանց խեղճութեան, ԳՅ.ին շինել են մի հիեղեցի սովորական գիւղական եկեղեցիների նման՝ անշոք, անգիբէթ, իր մեծութեամբն ու դեղնից դուրս լինելով զիւղի միւս քներից դարբերող: Քահանայ չունին, սրանց հովում է ծըկըդէն գիւղի քահանան:

Տղամարդիկ համեստ են, աշխարող, դինի խմել չզիտեն և լու քնաւորութեան որէր են, Սակայն կանայք այնքան էլ օրինակելի վարք ու բարք չունին, ասում են 12 դան մէջ 3 յլի աղջիկ կայ: Բայց կինը որպէս մորդու օգնական — այսպիս անդնահարելի է, նրա ոչ միայն աչ թես է, այլ դեռ մի բան էլ աւել Ամեն հոգս, բացի վարուցանքը, ծանրանում է հաւասարապէս նաև նրանց վրայ, նրանք կատում են, որ նորութիւն չէ մեր նաև ուրիշ կողմերի գիւղերի համար, բայց որ նորութիւն էր ինձ համար այդ այն է, որ նրանք նաև հունձ են անում: Տան հոգսերն ի հարկէ նրանց վրայ է: գործում է զուլսայ, չուխայ: Չնայած այս աշխարհանքին, կինը աւոր դիրք ունի և այն ոչ թէ լինդհանուր առմամբ, այլ համեմատող դիրք ունի և այն ոչ թէ լինդհանուր առմամբ, այլ համեմատող միւս գիւղերի կանանց դրութեան հետ: Կին ծեծեն այս մաքած միւս զիւղերի կանանց դրութեան հետ: Կին ծեծեն այս զիւղում սովորական բան է: Աղջիկներն ամուսնանում են 18—20 տարեկան, մի բացառիկ երկոյթ Զանդեղութիւն համար, պատճառն աշակերտութիւնն է, որ բանող չկայ: գիւղը շատ է, աղքատ և յեր ընկած: Պատճառն են սիրահարութիւններ, բայց ծածուկ: Հաս պահներ շիան:

Քպրոց չկայ, ի հարկէ: մանուկների կրթութիւնը բանն ու հանդումն է մինչև մեծանալները, յեղոյ մեծ մասը մնում է, գիւղում՝ իրանց բանն ու գործին, ոմանք զնում են հանքերը բանելու, միւերկուսն էլ Բագու մշակութեան: Պանդիստիլու պագմառը չքաւորութիւնն ու նոր բուն-դիել անելու, դժւարութիւններն են: Մի սկափողութիւն այս կողմերի երկերի մասին: Բոլորը բահամակապէս թուրքերէն են երդում, շրջածս զիւղերից ոչ մէկում եւ Վայերէն երդ չլսեցի, ոչ էլ պարապիսան արայայ թէ ունին: Զե՞ր

կարող պնդել որ օջան-գիւլումն-ի երգեր չունին. Դա այնքան դարածւած բան է, որ կարելի է ասել թէ համահայկական երգն այդ է որ կայ. բայց այդ երգերը երեխ նկատում են որպէս միայն Համբարձմանը երգելու բան, երբ վիճակ են հանում. ուրիշ Դեպքերում միայն թուրքերէն են երգում նկատել պէսպէ է, որ ընդհանրագէս շատ պրոզայիկ մարդ է զանգեզուրցին, իր հոգսերով ու աշխափանքով զբաղւած. երկու ամսից աւելի թափառեցի այդ գաւառում և միայն մի գեղ գիւղի «իշխաններին» քէֆի նսպած, այն էլ երեխ թափառական աշուղ կար գիւղում, դրա համար էին հաւաքւել: Ակամայ մարդ յիշում է նիրակի դաշտի գիւղուն, որի կեանքում երգը, այն էլ հայերէն երգը՝ ամեն գործի ընկերն է համարեա: